ՀԱՏԸՆՏԻՐ ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի վերջերին, չարագործի արյական գնդակից զոհվեց Հայաստանի սահմանամերձ շրջաններն ու արցախյան հողը անչնուրայաբար պաշտպանելու ելած, «Վանաձոր» ջոկատի հրամանատար, պաշտպանության նախարարության Վանաձորի զինվորական ոստիկանության պետ կապիտան
ՎԱՐԴԱՆ ՆԿՐՏԻՉԻ ԱՍԼՈՅԱՆԸ:
Հոկտեմբերի 31–ին լրանում էր նրա 33 տարին:



Անարժեք ավազակներ, կամ գիշերվա մեջ ապրող բվեր

... Ազատամարտիկ Դանիելյան, քաջամարտիկ Ասլոյան...
Լսողը դեռ լսում է այն արձագանքը, որն իր սլացքի մեջ նետահարվեց ներքևից: Նրա կոնչյունը բռնել էր երկինք ու երկիր: Իսկ նա կոնչում էր այդպես խորունկ ու այդքան ահասարսուռ միայն այն բանի համար, որ իրեն խոցած նետի սլաքը իր թռիչքի երեք փետուրներից մեկն էր, ամենահզորը, որ կորցրել էր մի
օդային բախման ժամանակ:
Լսողը նիմա էլ լսում է այն կաղնու շառաչը, որը, զարնան կապույտի մեջ շառավիղվելով, տապալվեց գետին: Իսկ նրա շառաչը դեռ լսվում է միայն այն բանի համար, որ նրան տապալած կայծի կոթը կաղնեփայտ էր:
Լսողը այսօր էլ լսում է Դավթի վերջին խոսքը՝ տխուր, տխուր, անասելի տխուր. «Իմ ցեղը իմ անչիչ է»:
... Ազատամարտիկ Դանիելյան, քաջամարտիկ Ասլոյան...
Չհասցրինք նրանց անխոցելիության լեգենդը հյուսել:
Այս ի՞նչ հպարտիր եղբայրասպանություն է՝ կայենությունից առավել, քաղաքացիական կռվի ի՞նչ չն է ու տեսակ՝ այդպես մեկիկ–մեկիկ և այդպես հակառակ հանվանե, մանավանդ՝ այդքան վախկոտ և այդքան ողորմելի, նամանավանդ՝ այնքան ստոր, որ արժանի չէ ժողովրդի ատելությանը: Իսկ եթե արժանի է մի բանի, ապա արժանի է միայն ու միայն զզվանքի, այն էլ թշնամու զզվանքին, նաև՝ մուրացիկի զզվանքին:
...Ազատամարտիկ Դանիելյան, քաջամարտիկ Ասլոյան...
Ովքե՞ր են գիշերվա մեջ կրակողները: Նրանք դավաճան լինելու չափ ուժ չունեն և ոչ էլ՝ խելք: Դավաճան լինելու համար պետք է հայրենիք ունենալ, կարիքն ունենալ հայրենիք ունենալու, հատկապես՝ կարիքը: Չունեցածը հնարավոր չէ դավաճանել: Իսկ նրանց ունեցած կարիքը շատ է գեղնաբարշ ու նավթաբոտ: Այդպիսի ունեցվածքով կարելի է մրայն ավազակ լինել՝ անարժեք ավազակ կամ գիշերվա մեջ ապրող բու՝ լուսնից սարսափահար: Այդպիսի ունեցվածքի տերը այնքան է աղքատիկ, որ անսակարկ ծախվում է առաջին հանդիպածին: Այդպիսի ունեցվածքի տերը կարող է դավաճանել միայն... իր կնոջը: Իսկ կնոջը դավաճանող ամեն ոք Վասակ չէ, ոչ էլ՝ Մեղուժան: Միամիտ չլինենք այդքան: Նա պարզապես արու ճանճ է կամ, լավագույն դեպքում՝ որչ խոզ: Զզվանք, զզվանք, առավել զզվանք:
Ահա թե ովքեր են գիշերվա մեջ կրակող այդ անհայրենիք ավազակները: Բայց չպետք է մոռանալ, որ ավազակները ապրում են խմբերով և առվորաբար ունենում են ավազակապետեր:
... Ազատամարտիկ Դանիելյան և քաջամարտիկ Ասլոյան:
Դառնանք, ողորմի տանք և շարունակենք մեր երթը:

«Արցախցին գաղթական չպետք է լինի ...»

Նրա մասին ակնարկը գրվել է օգոստոսի 3–ին, Դրմբոնում և պատրաստ էր տպագրության, երբ եկավ դաժան ու անսպասելի գույժը: Հոկտեմբերի 18–ին ահարեկչական աններելի գործողության հետևանքով զոհվեց Մարտակերտի շրջանի պաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ: Քսանվեցամյա տղաներավոր հրամանատարի անվան հետ են կապված Արցախի ազատագրական պայքարի գրեթե բոլոր փառավոր հաղթանակները:

Ճակատի ոսին մի բիչ խստացնում է դեմքը և դարչնում իր գարիբիկ հասուն: Անսահման բարի ու մտահոգ հայացքը խիստ է, ազդեցիկ: Խոսում է կամաց, սակայն հաստատուն ու համոզիչ: «Որսացել եմ» հրամանատարի ազատ բուկեները, բայց կարծես չի սրացվում հարցազրույցը: Սի կողմ եմ դնում թուղթն ու գրիչը և փորձում ինքս ինչ համար պարզել Նորիկի էությունը:

Եթե չլիներ պատերազմը, Արցախի մեկ ուրիշ «ճակատում» կճանաչեին 26–ամյա փոխգնդապետին՝ Մարտակերտի պաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար Նորայր Դանիելյանին:

Մինչև 88–ը առվորական տղա էր՝ ամենասովորական կենսագրությամբ: Ծնվել է Գյուլաթաղում, հաճախել տեղի դպրոցը, իսկ երբ բանակից վերադարձավ, ամեն ինչ փոխված տեսավ: Այդ օրվանից հորչանուրի մեջ է: Երկու անգամ «բախտ է վիճակվել» լինել թուրքական բանտերում: Ազատվելուց հետո նա, որ Սրեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ուսանող էր, ընկերների հետ չեռնամուխ է լինում Գյուլաթաղին կից Դաշտ կոչվող տեղամասում պաշտպանական կարևոր նշանակություն ունեցող բնակավայրի՝ Քաջավանի կառուցմանը: Գյուղն արդեն գյուղի նման էր, 150 բնակիչ ուներ: Հիմնադրման 100–րդ օրը Նորիկը կրկին գերեվարվում է ընկերների՝ Ալիկ Սարգսյանի, Արմեն Բաբայանի, Լյովա Գասպարյանի, Արարատ Դանիելյանի հետ: Նրանց տանում են Շուշիի բանտ, այնտեղից՝ Բաքու, ուր ազատագրկման են դատապարտում 12 տարով:

Սակայն 1992 թ. ապրիլի 10–ին՝ Մարադայի կոտրածի հաջորդ օրը, ընկերների շնորհիվ տղաները ազատվում են բանտից: Զարմանալի է, Նորիկի հիշողության բոլոր թվերը կապված են արցախյան իրադարձությունների հետ:

Գյուղ վերադառնալու հենց հաջորդ օրը կրկին Քաջավան է մեկնում: Եւ սկսում է կազմակերպել գյուղի պաշտպանությունը: Մայիսին Կիչան–Սրխավենդ գծում նորից վիրավորվում է: Հուլիսին, երբ հոսպիտալից դուրս է գալիս, օրհասական վիճակում էր Արցախը: Ընկած էր Շահումյանը: Մարտակերտից բիչ բան էր մնացել... Դաժան մարտեր էին, գյուղերը չեռքից–չեռք էին անցնում: Խուճապի ալիքը, որ գաղթն էր իր հետ բերել, կամաց–կամաց հանդարտվում էր: Նորիկը խումբ է հավաքում, սկսում է կռվել Մարտակերտում: Երրորդ անգամ վիրավորվում է Սեհմանայում: Ապաքինվելուց հետո նորից առաջին գծում է. Վանք–Առաջաձոր–Ղազանչի–Կիչան:

1992 թ. նոյեմբերի 1–ից Նորիկը ստանձնում է Մարտակերտի պաշտպանական ուժերի հրամանատարությունը: Այս տարի Այդամի համար, Մարտակերտի համար կորուստների դարչ եղավ: Թշնամու կրակակետերը լռեցին Քելբաջարում, հանտ ու ծանր մարտերով ազատագրվեց Մարտակերտը: Հաջողված ռազմական գործողությունների համար 26–ամյա հրամանատարին շնորհվեց փոխգնդապետի կոչում:

Գլխավոր հրամանատարի փոքրիկ, անշուք սենյակում այնքան շատ էր Սոնթեն... Դպրոցական, սեղանին: Սոնթեի վերջին լուսանկարներն էին ու հավերժական պատգամները. «Եթե մենք կորցնենք Արցախը, մենք կշրջենք մեր ժողովրդի պատմության վերջին էջը»:

«Ու երդում տված եմ և կպատրկանեմ մեկ մարդու. այդ մարդը հայրենիքի ազատագրության զինվորն է: Իմ նպատակն է կռվել Արցախի հաղթանակի համար, հանուն որի կյանքս անգամ չեմ խնայել: ՈՒ երդում տված եմ»...

Հարցիս, թե անսպասելի չէի՞ն այս հաղթանակները և ո՞րն է, ընդհանրապես, հաջողության գաղտնիքը, Նորիկը պատասխանեց, որ անսպասելի ոչինչ չկար: Արցախցին գաղթական չի եղել և չպիտի լինի: Հերոս ու խաղաղասեր ժողովուրդը պիտի իր հողում ապրի:

«Այստեղ մենք ընկերներ ենք բոլորս՝ մեկս մյուսի թիկունքին կանգնած, և մեր հողն ենք պաշտպանում. սա՝ է մեր հաջողության գաղտնիքը»:

Ես, ցավոք, ականատես չեմ եղել, նրա բոլոր զինվորներն են վկայում. Կռվի մեջ Նորիկը խիզախ է, աննահանջ: Կարգապահությունը գործելակերպ է: Ամենաթեժ կետերում տղաների հետ է: Երբ բարյունք–բարյունքի հեգեհիչ են գրավում, հաջողված է համարում գործը: Իսկ խաղաղության պահերին հանգիստ է, բարեհամբույր, բոլորին հասանող:

Նորիկին պետք է ճանաչել: Ամեն մեկն իր համար պետք է հայտնագործի նրան: Նրա համար սանկալին երբեք անհնարին չէ: Զարմանալի ուժ ունի, ամեն ինչ հասցնում է անել: Այս տարի Արցախի առաջին պետական համալսարանի առաջին դիպլոմակիրը եղավ:

Ճակատն ու թիկունքը երբեք կապված [illegible] Նորիկի համար: Թիկունքում գերագույն [illegible] հնդիրն է համարում ազատագրված գյուղերի [illegible]

Ժամանակն անցնում է, գլխավոր հրամանատարին ապատում են ամենուր:

Մարգարիտ Սարգսյան

3-ը օգոստոսի, 1993 թ. Դրմբոն, հատուկ «Հայ զինվորի» համար